

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ
ԱՌԱՋԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) անդամների թեկնածուների առաջարկման հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ նախարար)՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից առաջարկված թեկնածուներից:

3. Հանձնաժողովի կազմը բաղկացած է 9 անդամից, այդ թվում՝ նախագահից և 8 անդամներից: Հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է նախարարի կողմից: Քարտուղարը չի հանդիսանում հանձնաժողովի անդամ:

4. Հանձնաժողովի նախագահը պետք է լինի հարկային կամ մաքսային ծառայող: Հանձնաժողովի նախագահ չի կարող լինել հանձնաժողովի անդամից ցածր պաշտոն զբաղեցնող ծառայողը:

5. Սույն կարգի համաձայն նախարարության՝ ներքին աուդիտի, իրավաբանական, մաքսային հսկողության, իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման, քննչական, օպերատիվ հետախուզության և ներքին անվտանգության, ստուգումների կազմակերպման և դիտարկման գործառույթ իրականացնող

ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև հարկային տեսչությունների և մաքսատների (մաքսակետերի) աշխատանքները համակարգող նախարարի տեղակալները նախարարին ներկայացնում են թեկնածու (թեկնածուներ) հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով: Թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝

1) ներկայացման պահին պետք է ունենա հարկային կամ մաքսային ծառայության առնվազն 2 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ կամ պետական ծառայության մյուս բնագավառներում առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

2) ներկայացման պահին պետք է զբաղեցնի հարկային կամ մաքսային ծառայության բարձրագույն կամ գլխավոր պաշտոն:

3) ներկայացմանը նախորդող 1 տարվա ընթացքում չպետք է ենթարկված լինի կարգապահական պատասխանատվության:

6. Սույն կարգի 5-րդ կետում նշված առաջարկություններին կցվում են թեկնածուի ծառայողական բնութագիրը, թեկնածուի մասին հարկային և մաքսային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի եզրակացությունը, որը պետք է ներառի թեկնածուի կողմից հարկային, մաքսային և հարակից օրենսդրության, ինչպես նաև հարկային և մաքսային ծառայության մարմինների կառուցվածքային ստորաբաժանումների գործառնությունների իմացության գնահատականը:

7. Նախարարը՝ հանձնաժողովի նոր նախագահ կամ անդամ նշանակում է, գործող նախագահի կամ անդամի՝ հարկային կամ մաքսային ծառայության պաշտոնից ազատվելու կամ այլ ստորաբաժանում տեղափոխվելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքերում: Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հիմնավորմամբ, հանձնաժողովի անդամը նախարարի կողմից կարող է մինչև մեկ ամիս ժամկետով փոխարինվել նույն ստորաբաժանման մեկ այլ ծառայողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ